Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

02.12.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 30.11.2016թ.-ի թիվ 135 կարգադրությունը, Վայոց ձորի մարզային ենթակայության <<Եղեգնաձորի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2015թ.-ի մշակութային միջոցառումների ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի, Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Մ.Սիմոնյանը և հաշվապահ՝ Զ.Մարգարյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի մեկ տարվա ներքին աուդիտորի աշխատանքային փորձ:

Կազմակերպության կողմից, համաձայն սուբսիդիայի հատկացման պայմանագրերի, իրականացվել է 7 մշակութային միջոցառում 2618,5 հազ.դրամ ընդհանուր գումարով /<<Սուրբ Սարգիս. սիրահարների և երիտասարդների տոնի նշում-250.0 հազ.դրամ>>, <<Կանանց միջազգային օրվան նվիրված-200.0 հազ.դրամ>>, <<Երաժշտական բեմադրությունների մարզային փառատոն-348.5 հազ.դրամ>>, <<Մեծ եղեռնի 100 ամյակին նվիրված-500.0 հազ.դրամ>>, <<ՀՀ անկախության օրվան նվիրված-220.0 հազ.դրամ>>, <<Բերքի տոն-800.0 հազ.դրամ>> և <<Հայ ֆրանսիական մշակութային բարեկամություն-300.0 հազ.դրամ>>/: Առկա են նախահաշիվները՝ կազմված մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից/պատասխանատու ստորաբաժանում/, հաստատված մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից: Ըստ մշակութային միջոցառումների առկա են ծախսերը հիմնավորող փաստաթղթերը /սցենար-նկարագրերը, հաշիվ-ապրանքագրեր, վճարման հանձնարարագրերը, դրամարկղի մուտքի և ելքի օրդերները, միջոցառումների մասնակիցների հետ կնքված պայմանագրերը, ընդունման-հանձնման ակտերը/:

Թերություններ և խախտումներ.

Սուբսիդիայի հատկացման թվով 7 պայմանագրերում, միջոցառման թվով 6 սցենար-նկարագրերում բացակայում են պայմանագրի կատարման և իրականացվող միջոցառման ժամկետները:

Առաջարկում ենք .

ա/ Կնքված պայմանագրերում ապահովել պայմանագրերի կատարման և իրականացվող միջոցառման ժամկետների առկայություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Ներքին աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Խ. Խաչատրյան

Եղեգնաձորի մշակույթի տնօրեն՝ Մ. Սիմոնյան

Հաշվապահ՝ Զ. Մարգարյան